



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

4 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Լևոն Զաքոյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Լևոն Զաքոյանը 2018 թվականի հունիսի 15-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին համապատասխանող սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանմամբ, որի համաձայն՝ երաշխավորվում է թեպետ ձևականորեն ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը ենթակա, այսուհանդերձ, բնույթով ածանցյալ պահանջի քննության բացառումը ՀՀ վարչական դատարանում:

Միաժամանակ, խնդրում եմ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետն այն հիմքով, որքանով որևէ տարբերակում չի ապահովում ոչ իրավաչափ վարչական ակտի հիմքում ընկած

փաստաթղթերի բնույթի միջև, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր»:

2. Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի վերաբերյալ դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթը կարգավորում է այն իրավիճակները, երբ անձանց կողմից ՀՀ վարչական դատարան են ներկայացվում երկու պահանջ, որոնցից մեկն ակնհայտորեն հանդես է գալիս հիմնական պահանջի կարգավիճակում: Արդյունքում խնդրո առարկա հոդվածի իրավակարգավորման առարկայում ուղղակիորեն չեն ներառվում այն իրավիճակները, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում իր բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող մեկ պահանջ, որն ինքնին թեպետ ձևական իմաստով ներառվում է Վարչական դատարանի իրավասության տիրույթում, բայցևայնպես դրա իրավաչափությանն ու հիմնավորվածությանը գնահատական տալու համար անհրաժեշտ է քննարկել և վերլուծել նաև հիմնական իրավահարաբերությունը: Այսինքն՝ խնդրո առարկա նորմը չի կարգավորում այն դեպքը, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող մեկ պահանջ, որը թեպետ ներառվում է ՀՀ վարչական դատարանի իրավասության տիրույթում, սակայն չի կարող արդյունավետ գնահատվել առանց հիմնական իրավահարաբերության հիմքերը գնահատելու: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմն այնքանով, որքանով չի նախատեսում բնույթով ածանցյալ պահանջի քննության անհնարիությունը վարչական դատարանում, պետք է մեկնաբանվի սահմանադրաիրավական այնպիսի մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատարան ներկայացված՝ բնույթով ածանցյալ պահանջը չպետք է ինքնավար և առանձին քննության առարկա դառնա վարչական դատարանում, եթե հնարավոր չէ ներկայացված պահանջը բավարարել առանց հիմնական՝ բնույթով քաղաքացիաիրավական հարաբերության հատկանիշներին իրավական գնահատական տալու:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի վերաբերյալ ներկայացրած հիմնավորումներում դիմողը նշում է, որ վիճարկվող նորմը որևէ հնարավորություն չի տալիս գնահատելու գույքի բարեխիղճ ձեռքբերողի իրավական-սահմանադրական հավակնությունները: Արդյուն-

քում՝ նշյալ նորմը համարժեք տարբերակում չի ապահովում վարչական ակտի անվավերության հիմք հանդիսացող փաստաթղթերի գնահատման համակարգում, այն է՝ որևէ տարբերակում չի դնում «պայմանագիր» համարվող կեղծ փաստաթղթի և այլ փաստաթղթերի միջև, ինչի հետևանքով անձը զրկվում է արդյունավետ իրավական պաշտպանությունից: Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմով սահմանված իրավակարգավորումների արդյունքում վարչական դատարանը չի կարողանում ապահովել վարույթի բազմակողմանիության, օբյեկտիվության ու լրիվության սկզբունքների վրա հիմնված՝ գույքի սկզբնական սեփականատիրոջ և բարեխիղճ ձեռքբերողի միջև առկա վեճի լուծման նպատակով ներկայացված իրավափաստարկների համակարգային ստուգում և գնահատում, ինչի հետևանքով խաթարվում է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը:

3. Լևոն Ջաքոյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է ընդունման մասնակիորեն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1 Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի մասով դիմումում առաջադրված հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Վիճարկվող դրույթի մասով դիմողն, ըստ էության, առաջ է քաշում օրենսդրական բացի խնդիր՝ հիմնավորումներ ներկայացնելով առ այն, որ «... խնդրո առարկա նորմը չի կարգավորում այն դեպքը, երբ ՀՀ վարչական դատարան է ներկայացվում բնույթով ածանցյալ նշանակություն ունեցող մեկ պահանջ, որը թեպետ ներառվում է ՀՀ վարչական դատարանի իրավասության տիրույթում, այնուհանդերձ, չի կարող արդյունավետ գնահատվել առանց հիմնական իրավահարաբերության հիմքերը գնահատելու»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ, անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը, նշել է, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն

օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք: Չարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողը զրկված չէ, այսպես կոչված, «հիմնական իրավահարաբերության հիմքերը» քաղաքացիական դատավարության շրջանակներում ստուգելու իրավական հնարավորությունից: Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակները: Հետևաբար, վիճարկվող դրույթի շրջանակներում առկա չեն ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերոնշյալ որոշման մեջ ամրագրված երեք պայմաններից որևէ մեկը, այն է՝

- օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ,
- օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա,
- առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը, որի առկայությամբ հնարավոր կլինեք դիմողի կողմից վկայակոչված օրենսդրական բացը քննության առարկա դարձնել Սահմանադրական դատարանում:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՄԴ թիվ 1 դատական կազմը գտնում է, որ նշյալ դրույթի մասով առկա է Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք:

3.2 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի վերաբերյալ.

Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի մասով Սահմանադրական դատարանը պարզեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքեր, մասնավորապես՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմումն ակնհայտ անհիմն չէ,
- դիմողը պահպանել է Սահմանադրական դատարանի դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Լևոն Զաքոյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ Վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի մասով, մերժել:

2. «Լևոն Զաքոյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝



4 հուլիսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/1-18